№ 6 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 21 1904 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 21 № 6

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կօպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(32-ՐԴ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ **1904** ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 րուբլի, յունվարի 15-ից մինչև մարտի 1-ը նոյնպէս 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն) և Գուտտէնբերգ» գրավաճառանոցում։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկիրը և նրա հարցերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նաւթարդիւնաբերողների XVIII-րդ համագումար ժողովը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անհետացած մի քանի դէմքեր. Հեռաւոր Արևելքում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նորութիւններ։

ԵՐԿԻՐԸ ԵՒ ՆՐԱ ՀԱՐՑԵՐԸ

—

Մեր գաւառական աշխատակիցները և թղթակիցները յայտնում են, որ նրանց շրջապատող կեանքը թմրած է և չէ ներկայացնում այնպիսի երևոյթներ, որոնք պարունակում լինէին հետաքրքրական գծեր ուրիշների համար և ուրեմն լրագրական յօդուածների և թղթակցութիւնների առարկայ դառնային։

Մենք չափազանցրած կարծիք չունենք մեր գաւառի մասին. մենք էլ գիտենք, որ այնտեղ կեանքի զարկը ուժգին արտայայտութիւններ չէ ստացել և մենք ընդունում ենք, որ շատ երևոյթներ կրում են բուն տեղական և մասնաւոր բնաւորութիւն, բայց և այնպէս գաւառական կեանքը իր ամբողջութեամբ շատ հարուստ է ու բազմակողմանի և նա կարող է ոչ միայն առատ նիւթ տալ թղթակցութիւնների համար, այլ և առիթ դառնալ կարևոր ուսումնասիրութիւնների և խորհրդածութիւնների համար։

Ժողովուրդն ապրում է նիւթական և հոգեկան հոգսերով ու ցաւերով։ Բաւաբարութիւն տալ այդ հոգսերին ու ցաւերին—դա մի մեծ ծառայութիւն է, որի մէջ որոշ լուրջ դեր ունի կատարելու մամուլը իր աշխատակիցների և թղթակիցների հետ միասին։ Եթէ այսօր գաւառական կեանքի զարկը թոյլ է և դանդաղ, այդ այն պատճառով է, որ բազմադարեան ասիական անցեալը չէր դրդում մարդկանց դէպի աւելի եռուն, բազմակողմանի և բեղմնաւոր շարժում, որ ժողովրդի մէջ խեղդված էր նախաձեռնութեան ոգին և ամեն մարդ պտտում էր սահմանափակ և առմիշտ որոշված նահապետական պահանջների մի նեղ շրջանակի մէջ։

Մօտեցէք կեանքին գիտութեան և լուսաւոր գաղափարների տեսակէտներով, արձանագրեցէք առաջադիմական մտածողութեան այն առաջին նշոյլները, որոնք երևում են կեանքի մէջ, յայտնագործեցէք կուլտուրական այն նոր քայլերը, որոնք մարդկանց մղում են դէպի աւելի քաղաքակրթված դրութիւն, և դուք կը տեսնէք, որ երևոյթներ, կարիքներ, հարցեր, որոնք կարևոր են հասարակական ուշադրութեան և քննութեան համար, բազմաթիւ են և նոյն իսկ անսպառ։ Բաւական է, որ դուք բարձրացնէք վարագոյրը և ասպարէզ դնէք մի քանի կենսական հարցեր, շուտով նրանց կը հետևեն ուրիշները և ահա մեր երկրի կեանքը իր չար ու բարիով կը ներկայանայ ձեր առաջ, մեծ գործ տալով այն բոլոր անձերին, որոնք դիտաւորութիւն ունեն գործել մեր երկրի և նրա ազգաբնակութեան օգտին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Մաղաքիա Դարագաշեանի մահը առիթ դարձաւ, որ արևմտեան հայոց լրագրութեան մէջ նորից յարութիւն առնէ գրաբարի և աշխարհաբարի հարցը։ Մի հարց, որի շուրջը առնուազն մի ամբողջ դար բորբոքված էր կռիւ ու մրցութիւն։ Ինքը, Դարագաշեանը, իբրև հին մարդ, իբրև Մխիթարեան վարդապետների հին սերունդին պատկանող մի գրագէտ, գրաբարեան էր, ի հարկէ, բայց ի վերջոյ ստիպված էր գրել աշխարհաբար։ Ով կարդացել է նրա «Քննական Պատմութիւնը», նա շատ լաւ գիտէ, թէ ինչ աշխարհաբար էր դա։ Գրաբարից քիչ զանազանվող մի լեզու, որ խորթ ու անմատչելի էր ընթերցող հասարակութեան համար և որի մէջ կենդանութեան շունչ չը կար։ Եւ սակայն հանգուցեալը այդպէս էր գրում, որովհետև հաւատարիմ էր մնում իր ընտրած սկզբունքին։ Նոր ժամանակի պահանջին տեղի տալով, նա, ինչպէս և շատ շատերը մեր հին սերունդից, ասում էր թէ պէտք է գրել աշխարհաբար, բայց այն պայմանով, որ այդ լեզուն հիմնվի մեր դասական հին լեզուի հարստութեան վրա։ Եւ նա ինքն էլ այդպէս էր վարվում, ուստի նրա լեզուն այնքան խորթ ու դժուարամարս էր։ Սա այնպիսի մի պարզ օրինակ է, որ նրան հետևելը առնուազը ժամանակի կորուստ պիտի համարվէր։ Բայց Դարագաշեանի և նրա նմանների ասածները այսօր էլ կրկնվում են։ Ահա ինչ է ասում «Սուրհանդակ» լրագիրը,

> Աղուոր բան մըն է անշուշտ ժողովրդային խօսուած լեզուին սիրուն բառերը, ասութիւնները մտցնել գրուած լեզուին մէջ, որով վառ երանգներ կը ստանայ անիկա, ապրուած բան մը կըլլայ։ Բայց ատիկա ընելով հանդերձ, գրող մը պարտաւոր է գիտնալու լեզուին տարրական օրէնքները։ Ու քանի որ՝ հակառակ բոլոր ըսուածներուն ու ըսուելիքներուն՝ գրաբարը հարստութեան զեղուն աղբիւր մըն է աշխարհաբարին համար, իր անսպառ բառամթերքովը, իր բարդութեան եւ ածանցման կանոններով, ոճերովը եւ այլն, պէտք էր որ մեր երիտասարդներէն գոնէ անոնք որ հրապարակագրութիւնը ընտրած են իրենց կեանքի ասպարէզ, գիտնային գրաբարը՝ գոնէ Աւետարանի պարզ լեզուն հասկնալու չափ, գոնէ կարդացած ըլլային հանգուցեալ Դարագաշեանի Գործնական Քերականութիւնը, որպէս զի չաղճատուէր, չը կերպարանափոխուէր, չաղաւաղուէր մեր լեզուն։

Ով ուզում է, թող սովորէ գրաբար լեզուն, —դրա դէմ մենք ոչինչ չունենք։ Բայց ասել թէ միայն գրաբարը իմանալու միջոցով կարելի է աշխարհաբարի կանօնները պահած լինել, մեր կարծիքով, մի մոլորութիւն է, որը հերքելու համար բազմաթիւ կենդանի օրինակներ կան։ Աշխարհաբար լեզուն, ինչպէս և ամեն մի լեզու, որ գիր ու գրականութիւն ունի, պէտք է մշակած, կարգաւորված կանօնների տէր լինի։ Եւ մենք կարծում ենք, որ մեր աշխարհաբարը, մնալով ինքնուրոյն և ինքնիշխան լեզու, կարող է և պիտի այդպիսի կանօններ մշակել իր համար։ Բաւական է, որ ըմբռնվեն նրա ոգին, զարգացման, կանօնաւոր առաջադիմութեան օրէնքները։ Գրաբարը իբրև հիմք, իբրև ղեկավարող ընդունելը ոչ միայն օգուտ չի բերի, այլ վնասներ կը հասցնէ աշխարհաբարին, ո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Գրականութեան, գեղարուեստի, գիտութեան աշխարհից)

—

Գիտութեան աշխարհի մէջ օրվայ նորութիւնը այն հրաշալի յոյսերի ասպարէզն է, որ մարդկութեան առաջ բացել է ռադիօմ նոր տարրի և նրա ճառագայթների գիւտը, կամ, ինչպէս ասում են այժմ գիտնականները՝ ռադիօնական-գործունէութիւնը։ 1896-ին, Ռէնտգէնի X ճառագայթների գիւտից մի քանի ամիս յետոյ, պ. Հանրի Բէկքրէլ գտաւ, որ ուրան մետալի աղերը նոյն յատկութիւններով են օժտված, ինչպէս Ռէնտգէնի ճառագայթները։ Այդ եղաւ ելակէտ ռադիօմի գիւտի, որի պատիւը պատկանում է ֆրանսիացի Կուրի ամուսիններին, իսկ ռադիօմի ճառագայթների գիւտը՝ Հանրի Բէկքրէլին։ Ուրեմն, ռադիօմը մի նոր տարր է, որ քիմիական զանազան վերլուծութիւններից յետոյ արձակում է որոշ և զօրաւոր ճառագայթներ։ Այդ ճառագայթները, ինչպէս ասացինք, որոշ յատկութիւններ ունեն, ինչպէս Ռէնտգէնի X ճառագայթները. նրանք ներգործում են լուսանկարչութեան մէջ գործածվող նիւթերի վրա և տալիս են նոյն արդիւնքը, ինչ որ լոյսը. նրանք երփներանգ գունաւորութիւն են տալիս կալիեան աղերին, ապակիներին. նրանք կարող են մտնել այդ արդիւնքների կազմութեան մէջ, ինչպէս և պարաֆինի, թղթի կազմութեան մէջ և չը նախատեսնված կերպարանափոխութիւններ առաջ բերել։

Ռադիօմը պէտք է գալիս և վիրաբուժական գործողութիւնների ու բժշկութեան մէջ, շնորհիւ իր ֆիզիօլօգիական յատկութիւնների։ Եթէ ռադիօմի աղի մի փոքր քանակութիւն փակեն կարտօնի կամ մետաղի մի տուփի մէջ և այդ տուփը մօտեցնեն փակ աչքին, սա մի բոլորովին առանձին զգայնութիւն է կրում. աչքը լուսաւոր է դառնում և այդ լոյսի աղբիւրը իրա՝ աչքի մէջն է։ Ռադիօնական գործունէութիւնը ներգործում է և մարդի մորթու վրա։ Կարծում են, որ ռադիօմի այդ մորթային ներգործութիւնը իրական միջոց կը տայ քաղցկեղի և լուպուսի բժշկութեան համար։ Վերջապէս, ռադիօմը կարող է օգնել սրտի և ջղային կենտրոնների ապահով քննութեան։ Դեռ շատ և շատ յոյսեր են տածում գիտնականները ռադիօմի մասին. նա հրաշքներ պէտք է գործէ. յոյսերի մի հիանալի ասպարէզ է նա բաց անում գիտութեան առաջ։

Տեխնիքական կատարելագործութիւններն աքանչելի են. նորերս անգլիացիները սկսեցին շինել Լիվերպուլի և Մանչէստերի մէջտեղ մի երկաթուղի, որ պէտք է քսան րոպէի վերածէ տարածութիւնը այդ երկու քաղաքների մէջ, որովհետև գնացքը պէտք է ժամը 110 միլ տեղ կտրէ։

Միւս կողմից Նիւ-Եօրկում մի նոր կախովի կամուրջ են շինել, առանց կամարների, որ աշխարհումս մինչև այժմ եղած կամուրջներից ամենամեծն է։ Նա նստել է 10 միլիօն դօլարից աւելի. նրա վրայով անցնում են վեց երկաթուղիներ, երկու ճանապարհ կառքերի, երկու մայթ հետևակների և երկու շաւիղ վելօսիպէդների համար։

Մի նոր գործիք ելեքտրոգրաֆ (ելեքտրագիր) անունով, որ հնարվել է նորերս, հնարաւորութիւն է տալիս արձանագրել անմիջապէս խօսակցութիւնը, որի հետքերը պահվում են և ապա վերարտադրում, երբ կամենան։ Ելեքտրագիրը մի կօմբինացիա է հեռախօսի և գրաֆօֆօնի։ Նա դեռ կարօտ է մի քանի կատարելագործութիւնների, բայց կարծում են, որ շուտով նրա գործածութիւնն ընդհանուր կը դառնայ։

—

Յայտնի քիմիագէտ, ֆրանսիական Ակադեմիայի անդամ Բերտօլէ նորերս ներկայացրեց մի զեկուցագիր, որով ցոյց է տալիս, որ նաֆթալինը ամենևին միկրօբասպան յատկութիւն չունի, ինչպէս կարծել են մինչև այսօր. հետևաբար, զգեստների և հիւսուածքների պահպանութեան համար ցեցերի դէմ, աւելի լաւ է գործածել լաւանդան (եղնդեղ)։

Անցեալ դեկտեմբեր ամիսը գիտութեան տօնն էր. կատարվեց Նօբէլի մրցանակի բաշխումը։ Գիտութեան մրցանակը, ամենամեծը, 100,000 ֆրանկ, տրվեց պ. և տ. Կուրին ու պ. Հանրի Բէկքրէլին, ռադիօմ նոր տարրի և նրա ճառագայթների գտնողներին։ Բնագիտութեան մրցանակը տրվեց շուեդացի պրօֆէսօր Ս. Արհենիուսին։ Բժշկութեան մրցանակը՝ պրօֆէսօր Ֆինսէնին, որ հնարեց լուսաբուժական մէթօդը։ Ինչպէս յայտնի է, պրօֆէսօր Ֆինսէն կարողանում է բուժել լուպուս կոչված մորթային հիւանդութիւնը արեգակային պարզ լոյսի ազդեցութեամբ։

—

Տօն էր և գրականութեան համար. գրականութեան մրցանակն ստացաւ Նորվեգիայի յայտնի գրող Բիօրնստեռնէ-Բիօրնսոն, իսկ «Գօնկուրների ակադէմիան» իր 5000 ֆրանքնոց առաջին մրցանակը յատկացրեց 1903 թըւին երևցած ամենալաւ րօմանին»։ Մրցանակը բաշխող 10 դատաւորները յատկացրին նրան պ. Ժ. Նաուին (Nau), որ գրել է «Թշնամի ույժերը» (Les Forces Ennemies) վէպը, որի մէջ նա գեղեցիկ կերպով ուսումնասիրել է խելագարների կեանքը։ Մինչև այդ վէպը նա գրել էր միայն ոտանաւորների մի փոքր ժողովածու՝ «Յոյսի շեմին» վերնագրով։

Անցեալ տարի անգլիացի Ջօն Մօրլէյ լոյս ընծայեց «Գլադստօնի կեանքը» գիրքը, բաղկացած 2000 էջերից։ Անգլիայի պետական մեծ մարդի և հայրենասէրի մասին մինչև այժմ կատարված ուսումնասիրութիւններից և կենսագրութիւններից գերազանցն է։ Սթէդ, իր հանդէսում երկարօրէն խօսելով այդ եռհատոր երկասիրութեան վրա, գովում է հեղինակի յըստակ ու գեղեցիկ ոճը և «Գլադստօնի կեանքը» ժամանակակից պատմութեան նուիրված աշխատութիւններից ամենակարևորն է անուանում։ «Գիրքը, ասում է Սթէդ, արժանի է Անգլիայի պետական մեծագոյն անձերից մէկին, գնահատված՝ իր մեծագոյն գրողներից մէկի կողմից»։ Արդ, այդ գրքի հրատարակիչները վճարել են հեղինակին, իբրև վարձատրութիւն 250,000 ֆրանկ և այդ՝ մի կենսագրութեան համար։ Ամերիկայում Նիկօլա և Ջօն-Հայ, որոնք գրել են մի ուրիշ մեծ պետական անձի՝ Աբրահամ Լինկօլնի կենսագրութիւնը, ստացան նոյնպէս հրատարակչից 250,000 ֆրանկ։ Գրանտ զօրապետի ընտանիքը հրատարակեց նրա «Յիշատակագրերը» և ստացաւ 1,500,000 ֆրանկ։

րովհետև այդ երկու լեզուները շատ դէպքերում են իրար հակառակորդ հանդիսանում ձևերի, դարձուածքների և ոճերի մէջ։ Անցեալի մէջ մենք ունենք շատ օրինակներ, որ գրաբարով ղեկավարվողը ստրկացել է գրաբարին և կարողացել է Գարագաշեանի գրաբար-աշխարհաբարեան ծանր խառնուրդը տալ։ Իսկ ինչ ապահովութիւն կայ, որ այսուհետև էլ նոյնը չի կրկնվի։

*

«Մուրճ» ամսագրի վերջին, դեկտեմբերի, համարում գտնում ենք մի հետաքրքրական մերկացում, որ բնորոշում է տեղական ռուս թերթերի մէջ հայոց գրականութեան մասին խօսողներին։ «Մուրճի» մէջ տպվում էր յայտնի գիտնական Բօլլէսի «Հրաշալի Դար» աշխատութիւնը, որ անցեալ դարին նուիրած մի հետաքրքրական գիտական տեսութիւն է և որ տարիներ առաջ թարգմանվել է և ռուսերէն։ Բագուի «Бакин. Извѣс.» լրագրի մէջ մի պարոն, ահագին ապլօմբով ճառելով «Մուրճի» մասին, անուանել է Բօլլէսի այդ գործը, առանց այլ և այլութեան, «րօման»։ Ինչո՞ւ։ Պարզապէս այն պատճառով, որ չէ կարդացել։ Եւ ահա «Մուրճը» ասում է այդ պարոնին, թէ չէ կարելի առանց յօդուածները կարդալու, լոկ գիրքը թերթելով, վերնագիրներին նայելով, դատողութիւններ տալ, եզրակացութիւններ դուրս բերել։ «Մշակն» էլ անցեալ տարի բաւական առիթներ է ունեցել մերկացնելու Բագուի ռուս թերթի մէջ ամբարված առաքինութիւնները, որոնց մէջ աչքի ընկնողը հէնց չիմացած բաների մասին դատողութիւններ տալն է։

ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ XVIII-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ

IV

Ապա խօսեց պ. Պապպէ։ Նախ նա իր զարմանքը յայտնեց, որ այնպիսի կարևոր խնդիրը, ինչպիսին տարիֆի խնդիրն է,—զարմանալի արագութեամբ, մի տեսակ շտապողութեամբ է լուծվում։ Վերջին ժամանակներս նաւթի արդիւնաբերութեան մասին սկսեցին խօսել ամենքը, դատել աջ ու ձախ, առանց որ և է հասկացողութիւն ունենալու նաւթարդիւնաբերութեան պայմանների մասին։

Ո՛չ պակաս դեր խաղաց այդ բանում անբարեխիղճ, լրջութիւնից զուրկ մամուլը և այդ ծառայութեան դափնին պատկանում է «Московскія Вѣдомости» և «Новое Время» լրագիրներին, որոնք ինչ որ գաղտնի դաւադրութիւնների մասին էին խօսում, ինչ որ մութ բացատրութիւններ էին տալիս գետնի տակից նաւթ արտահանելու. բայց միթէ մեզնում գաղտնիք կայ. վերցրէք «Нефтяное Дѣло»-ի որ համարը որ կուզէք,—նրա իւրաքանչիւր տողից անկեղծութիւն և պարզութիւն է բուրում։ Բացի այդ, լուրջ հետաքրքրվողները նաւթարդիւնաբերութեան մասին ճշգրիտ տեղեկութիւններ միշտ կարող էին գտնել, եթէ կամենային։ Շնորհիւ այդպիսի արջի ծառայութեան, Պետերբուրգում էլ սկսեցին մեզնից երես դարձնել, մեր իւրաքանչիւր դիմումը, խնդիրքը թերահաւատութեամբ է ընդունվում, մեզ լսել չեն ուզում և մի գլուխ գոռում են, թէ Բագուն անծայր հարստութիւն ունի։ Չը գիտեմ ինչու, կարծում են, որ Բագուի նաւթարդիւնաբերողներն ամբողջ Ռուսաստանը պարտաւոր են ձրի լուսաւորել—այնպիսի չը տեսնված և չը լսված պահանջներ են անում մեզնից, թէև այդ բանը ալտրուիզմի գործն է և նաւթի արդիւնաբերութեան հետ ո՛չ մի կապ չունի։ Այդպիսի հրէշաւոր տեղեկութիւնները և դատողութիւններն են, որ առաջ են բերել Պետերբուրգի կառավարչական շրջաններում տարիֆի խնդիրը։

Ասում են, որ մեզ հետ մրցող երկրներում նաւթի աղբիւրները ցամաքում են, ուստի նոյն իսկ բարձր տարիֆով կերօսին արտահանելը մեզ ձեռնտու է և մենք կը դիմանանք այնտեղի մրցման. բայց դա ասում են միմիայն թոզ փչելու համար, առանց որ և է հիմունքի, որովհետև Ամերիկայից, Ռումինիայից ստացված տեղեկութիւնները բոլորովին հակառակն են ասում. այնտեղ նաւթի նորանոր աղբիւրներ են բացվում և եղածներն էլ իսկի ցամաքելու միտք չունեն։ Եւ ահա այսպիսի մի ժամանակ, երբ մեզ հարկաւոր է միանալ և ընդհանուր ուժերով կռիւ մղել մեր ընդհանուր թշնամու դէմ, այնպիսի բարեյաջող պայմաններ ստեղծել, որոնց շնորհիւ պատւաւոր կերպով դուրս գայինք այդ կռւից,—յանկարծ մեզ դէմ են անում տարիֆը բարձրացնելու հարցը և թարսի նման հէնց այն ժամանակ, երբ մենք աչք ենք բաց արել քնից և գիտակցական գործունէութեան նշոյլներ ենք ցոյց տալիս։ Երկաթուղային պօլիտիկան ասում է, որքան քիչ լինի տեղափոխվող ապրանքի քրէհը, այնքան շատ ապրանք կը տեղափոխվի և, հետևապէս, աւելի մեծ օգուտ կը տայ։ Բայց Անդրկովկասեան երկաթուղու պօլիտիկան ուրիշ բան է ասում. նա աշխատում է տեղափոխվող ապրանքի քրէհը բարձրացնել, օգտվելով այն հանգամանքից, որ արտահանելու ճանապարհ չունենք՝ գանձարանը հարստացնելու համար։

Յայտնի է, թէ ինչ օգուտ է տալիս գանձարանին մեր երկաթուղային գիծը։ Հայրենիքի շահերը պաշտպանելու համար հազար և մի տեղ երկաթուղային ցանցեր են անցկացնում, որոնք խաղաղ ժամանակ շատ քիչ արդիւնք, յաճախ էլ վնաս են տալիս,—իսկ դրա ջիգրը Անդրկովկասեան երկաթուղուց են հանում։ Կրկնում եմ, ասաց իր ճառի վերջին պ. ճառախօսը,—տարիֆի խնդիրը ամենալուրջ խնդիրներից մէկն է։ Պէտք է քննել բազմակողմանի և լուրջ կերպով, պէտք է լուսաբանել շատ կողմնակի խնդիրներ, պարզել իրերի դրութիւնը և ապա միայն այս կամ այն կարծիքը յայտնել։

Ապա մի քանի խօսք ասաց պ. Դվօրկօվիչ. Նա նախ իր զարմանքը յայտնեց, որ նաւթարդիւնաբերութեան համար այսպիսի մի խառնակ և անորոշ ժամանակ, հրապարակ է եկել տարիֆի նման լուրջ հարցը։ Այն ժամանակ, երբ երկաթուղային գիծը կառավարութեանը չէր պատկանում և նա այժմեան խոշոր նաւթարդիւնաբերողը չէր,—այն ժամանակ 9—12 կօպ. ապրանք տեղափոխելը վնասակար չէր համարվում։ Այժմ այդ գինը հասել է 16 կօպ., ինքը կառավարութիւնը շահագրգռված է նաւթային գործով, բայց էլի այդպիսի արգելքներ է յարուցանում նաւթային գործը ծաղկեցնելու դէմ։ Դեռ երկու տասնեակ տարի սրանից առաջ նա եղել է այստեղ և այժմ, ասում է նա, շատ քիչ փոփոխութիւն է գտնում նաւթարդիւնաբերութեան զարգացման մէջ։ Նա զարմանում է, որ ռուսաց կառավարութիւնն անվերջ արգելքներ և խոչընդոտներ է յարուցանում նաւթարդիւնաբերութեան դէմ և հնարաւորութիւն չէ տալիս զարգացնելու նաւթի նման խոշոր արդիւնաբերական ճիւղը. մի կողմից անասելի չափով ակցիզը, միւս կողմից նաւթահողերի հրէշաւոր կապալը, երրորդ կողմից տարիֆի բարձր չափը,—այդ բոլորը խեղդում են նաւթարդիւնաբերութեան իւրաքանչիւր ծիլ և նա ո՛չ մի հնարաւորութիւն չունի զարգանալու, բարգաւաճելու և երկիրը աւելի ևս հարստացնելու։

Նոյն իսկ Ռումինիան, այն աղքատ, խեղճ, փոքրիկ Ռումինիան, ասաց ճառախօսը, այդպիսի վաշխառուական կապերով չէ կաշկանդել իր երկրի նաւթարդիւնաբերութիւնը. նա ամեն հնարք գործ է դնում՝ ազատութիւն տալու արդիւնաբերութեան այդ մասին. նա նոյն իսկ մաքս չէ վերցնում նաւթահորեր քանդող գործիքներ ներմուծելուց, իսկ այսպիսի զանազան կապալների մասին այնտեղ հասկացողութիւն չունեն. այնտեղ հողը պատկանում է ֆերմերներին, որոնք տալիս են քանդելու՝ մի ութերորդ մասը ապահովելու պայմանով։ Եւ քանի որ, վերջացրեց իր խօսքերը ճառախօսը, Ռուսաստանում նաւթարդիւնաբերութիւնը այսպէս կաշկանդված կը մնայ, նրան չի տրվի իր ցանկացած և իրան անհրաժեշտ ազատութիւնը,—նա միշտ իր այսպիսի անորոշութեամբ անկոչ հիւրի նման կը չոքի սրա-նրա դռանը և կը քանդէ դեռ շատ տներ։

Ժողովը միաձայն որոշեց հեռագրով դիմել Պետերբուրգ և խնդրել, որ դեկտեմբերի 29-ի ժողովը յետաձգեն, մինչև որ նաւթարդիւնաբերողները իրանց ներկայացուցիչը ուղարկեն՝ պաշտպանելու համար տարիֆը չը բարձրացնելու խնդիրը։

Ռ. Յովհանջանեան

Բագու.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկուշաբթի, յունվարի 19-ին, Արտիստիքական ընկերութեան թատրօնում հայոց դրամատիկական ընկերութեան դերասանական խումբը ներկայացրեց Դը Կուրսելի «Երկու դեռահաս» մելօդրաման՝ տ.տ. Մելիքեանի և Վարդունու բենեֆիսին։ Ըստ սովորութեան՝ Թիֆլիսի հայ հասարակութիւնը աւելորդ էր համարել թատրոն գալ։ Դահլիճը կիսով չափ դատարկ էր, իսկ օթեակները բոլորովին դատարկ։ Բենեֆիցիանտները բարեխղճութեամբ տարան իրանց բաւական պատասխանատու դերերը և արժանացան մի քանի ընծաների ու ծափահարութիւնների։ Լաւ էր և երկրորդ՝ թոքախտաւոր դեռահասը (օրիորդ Խիթարեան)։ Ցնցող, ջղային և հիսթերիք արտադրութիւն է այդ դրաման։ Ջղային մարդկանց նա կարող է ուղղակի հիւանդացնել։

—

Յունվարի 17-ին, կովկասեան իրաւագիտական ընկերութեան նիստում, փաստաբան Մ. Գրուզէնբէրգ կարդաց մի զեկուցում «Քրէական դատարանի վերանորոգութեան մասին Անդրկովկասում» վերնագրով։ Ի նկատի ունենալով, որ այժմ մշակվում է այդ դատարանի ծրագիրը, և ենթադրվում է արմատական փոփոխութիւն մտցնել գոյութիւն ունեցող դատաստանական կազմութեան մէջ, զեկուցանողը անհրաժեշտ է համարում, որ ընկերութիւնը քննութեան առնէ ծրագրի այն հիմնական կէտերը, որոնք վերաբերում են արդարադատութեան կատարման Կովկասում։ Նոր ծրագիրը ի նկատի ունի մտցնել Կովկասում այսպէս կոչված շէֆֆէների դատաստանը, արդարադատութեան այն ձևը, որի համաձայն քրէական գործերի վերջնական վճիռը յանձնվում է նահանգական դատարանին, առանց բողոքելու իրաւունքի, այն զանազանութեամբ միայն, որ նահանգական դատարանը բաղկացած է 6 անդամներից, 3-ը նշանակովի, 3-ը երդուեալներ՝ հասարակութեան ներկայացուցիչներից։ Սակայն, զեկուցանողի ասելով, դատարանի այդ ձևը, որ առաջ գործադրվում էր Գերմանիայում, այժմ ընդհանուր դատապարտութեան է ենթարկված։ Զեկուցումն առաջ բերեց բուռն վիճաբանութիւններ։ Ընդհանուր ժողովը 15 ձայնով ընդդէմ 8-ի որոշեց՝ ցանկալի համարել շէֆֆէնների դատարանի ներմուծումը Անդրկովկասում մի քանի սահմանափակումներով։

—

Բարձրագոյն հրամանով, լուսաւորութեան մինիստրութեան գումարներից 6000 րուբլի է յատկացված Եկատերինօդարում արական գիմնազիայի նոր շէնք կառուցանելու համար։ Նոյն չափի գումար էլ յատկացվել է Կուբանի նահանգական կօզակ զինուորների ընդհանուր դրամագլխից նոյն նպատակով։

—

Թիֆլիսի քաղաքային դուման յունվարի 12-ին որոշեց 2000 րուբլի յատկացնել՝ քաղաքի չքաւոր բնակիչներին բաժանելու համար։ Նահանգապետը հաստատեց այդ որոշումը։

—

«Казбекъ»-ը հաղորդում է, որ Եկատերինօդարի II մասի պրիստաւի օգնական Միխայիլ Դիվարին՝ հասարակական վայրում՝ հասարակութեան անդամներից մէկի հետ կոպիտ ու անտակտ վարվելու պատճառով՝ 7 օր բանտարկութեան ենթարկվեց զինուորական բան-

---

Ահա ինչպէս են վարձատրում անգլիացի և ամերիկացի հրատարակիչները հեղինակներին...

«Դօն Քիշօտ» յայտնի գրքի հրատարակութեան 300-ամեակը տօնելու համար, որ լրանում է 1905 թ. մայիսին, Սպանիան մեծ պատրաստութիւններ է տեսնում և կառավարութիւնն աշխատում է ոչ միայն շքեղ տօնել այդ ազգային տօնը, այլ և նրան միջազգային հանգամանք տալ։ Դրա համար պէտք է հրաւիրվեն օտար ազգերը. պէտք է կազմակերպվի սերվանտէսեան մի ցուցահանդէս, պէտք է կատարվի մեծանուն հեղինակի արձանի բացման հանդէսը, տեղի պէտք է ունենան մրցութեան հանդէսներ և ցլամարտներ։ «Դօն-Քիշօտի» դերը կատարելու համար պէտք է հրաւիրվի անգլիացի յայտնի դերասան՝ Հէնրի Իրվինգ։

—

Գեղարուեստի աշխարհում դեկտեմբեր ամիսը բազմաթիւ նորութիւններ բերեց մեզ։ Դրամատիկական շարժումը Ֆրանսիայում շատ զօրեղ էր. միաժամանակ, Ֆրանսիայի հինգ նշանաւոր թատերագրողներ՝ Բրիեօ, Սարդու, Ժուլիէն, Մօրէա, Հէրվիեօ հինգ նոր բեմական գրուածներ արտադրեցին։ Բրիեօն տուեց «Մայրութիւն» (Maternité) պիեսան, որ երրորդ պատկերն է նրա ծրագրած եռատիպ հեղինակութեան. առաջին երկուսն են՝ «Ծծմայրերը» և Les Avariés։ Այս վերջին երկու գրուածքի կեդրոնականիդէան շատ պարզ է «պէտք է շատ երեխաներ ունենալ, շատ առողջ և կրթվի երեխաներ։ Մայրեր, ինքներդ սնունդ տուէք նրանց. հայրեր, պահպանեցէք ձեզ ժլատութիւնից»։ Այժմ, «Մայրութեան» մէջ հեղինակը աւելացնում է. «յարգանք մօրը, բոլոր պարագաներում, աղջիկ—մօրը, ինչպէս միւս մայրերին—որոնումն հայրութեան — դրամական նպաստ աղքատ ընտանիքներին»։

Սարդուն գրել է «Կախարդուհի» (La Sorcière») պիեսան, հինգ գործողութեամբ։ Նա պատկերացրել է մեր առաջ կաթօլիկ և վայրագ Սպանիան, իր ֆանատիկոսութեամբ և ինկվիզիցիայով։ Սիրոյ մի կենդանի իդիլլիա է բացվում մի մավրուհու և մի քրիստոնեայի մէջ. նա բարդվում է սպանութիւններով, դահիճներով, լետարգիական քնով և վերջանում է մի մահաբեր համբոյրով։ Բեմական արուեստը այդ դրամայի մէջ յաղթանակ է տանում, ինկվիզիցիայի պատկերի մէջ կախարդուհին պատասխանում է եպիսկոպոսին, որ մեղադրում է նրան քրիստոնէութիւնը չընդունելու համար. «մենք սպասում ենք, որ քրիստոնեաները մեզանից աւելի լաւ լինեն և ապա...»։

Ժան Ժիւլիէն գրել է «Օազիս (Oasis)» պիեսան, հինգ գործողութեամբ, որի մէջ մի քաջասիրտ մուսուլման և մի միանձնուհի, խոյս տալով հայրենական նեղ հաւատից, փորձում են կազմել մի նոր Եդեմ խաղաղ և անուշ սիրոյ։ Այդ Օազիսի շուրջը թափառում են բոլոր հին ֆանատիկոսութիւնները, եւրոպացին և արաբացին, առևտուրը և կրօնը, պատերազմը։ Զանազան ձախորդութիւններից յետոյ, մարդը և կինը միայնակ են մնում։ Բայց չէ՞ որ բաւական է մի զոյգ մարդկային ազգը փրկելու համար։ Այդ է պիեսայի բարձր իդէան։

Հետևելով Եւրիպիդին, Ժան Մօրէա գրել է «Իֆիգենիա» պիեսը հինգ գործողութեամբ, ոտանաւորով. նրա բովանդակութիւնն արդէն յայտնի է Եւրիպիդից։

Պօլ Հէրվիեօ գրել է «Le Dédale» (Բաւիղ) դրաման, հինգ գործողութեամբ. մի կին, որ սիրում է երկու տղամարդի, մինին մարմնով, միւսին հոգով—ահա իդէան։

Ռուսաց դրամատիկական շարժման մէջ նշանաւոր տեղ է գրաւում իշխան Սումբատովի (Իւժին) նոր պիեսան «Դաւաճանութիւն» (Измѣна) վերնագրով, որ նա անուանում է դրամատիկական լեգենդա Վրաստանի անցեալ կեանքից, հինգ գործողութեամբ։ Այդ նոր դրաման, որ առաջին անգամ խաղացվեց Մօսկվայում, 1903 թ. նոյեմբերի 19-ին և այժմ ևս խաղացվում է Թիֆլիսի ռուսաց բեմի վրա, ահագին աջողութիւն գտաւ։ Նրա թեման արդէն այն տեսակիցն է, որ մեծ հետաքրքրութիւն է շարժում, որովհետև նա պատկերացնում է «կռիւ ստրկացած ազգի ազատութեան համար»։ «Դաւաճանութիւնը» նկարագրում է Վրաստանի կռիւը 12-րդ դարում պարսկական տիրապետութեան դէմ, նկարագրում է զանազան անձանց, որոնք մասնակցում էին այդ կռւին, նկարագրում է ճնշման, ստրկութեան և ազատ հոգու զանազան արտայայտութիւնները։ Հերոսուհին՝ Զէյնաբ Խանումն է, Վրաստանի նախկին թագուհին, որ ամուսնու, թագաւորի սպանութիւնից յետոյ, դառնում է յաղթողի, Սուլէյման խանի կինը, ուրանում է հաւատը, 20 տարի կեղծում է, բայց ծածուկ պատրաստում է ապստամբութեան, վրէժխնդրութեան ծրագիրը։ Նա հասնում է իր նպատակին։ Հայրենիքը ազատվում է, թէև իր՝ Զէյնաբի սեփական արեան գնով։ Արժէ այս դրաման թարգմանել հայերէն և ներկայացնել։

Ոչ նուազ ուշադրաւ է և Մաքս Նորդաուի մի նոր պիէսը «Երկու աշխարհ» վերնագրով, չորս գործողութեամբ։ Նա պատկերացնում է երկու հակասական, թշնամի աշխարհայեացքների պայքարը. մի կողմից գերմանական արիստոկրատիական աշխարհը, որ ունի իր որոշ խիստ անողոքելի կանոնները և պահանջները, միւս կողմից սեմիտական գաղափարը։ Առաջին շրջանի մի օրիորդ սիրում է մի հրէայ երիտասարդ պրօֆէսօրի, որ իր նշանաւոր հեղինակութիւններով մեծ հռչակ է ստացել և արժանացել Ստօկհոլմի պրէմիային գիտութեան համար, բայց աղջկայ ծնողները լսել անգամ չեն կամենում, որ գերմանուհին կարողանայ ամուսնանալ հրէայի հետ։ Միայն մի պայմանով նրանք զիջանում են թոյլ տալ այդ mésalliance-ը, եթէ հրէայ պրօֆէսօրը ընդունէ քրիստոնէութիւն, բայց սա հրաժարվում է ասելով, որ պատմական պատճառներ թոյլ չեն տալիս նրան կատարել այդպիսի ուրացումն, թէև ինքը հաւատացող չէ։ Ահա այդ երկու սկզբունքների պայքարը և կազմում է դրամայի թէման։

Սարդուի մասին խօսելիս, մոռացանք յիշել, որ «Մադամ-Սանժէն» պիէսան նրան տուեց Ամերիկայում, թատրօնական երեք սէզօնի ընթացքում, 175,000 ֆրանկ, իսկ նրա միւս հինգ պիէսները—«Ֆէդօրա», «Թէօդօրա», «Կլէօպատրա», «Ժիսմօնդա» և «Տօսկա» տուել են նրան 1,875,000 ֆրանկ զուտ եկամուտ։ Ահա ինչպէս են վարձատրվում Ամերիկայում թատրօնական գրողները։

Հ. Առաքելեան

տում՝ նահանգապետի և ատամանի հրամանով։

—

Հեռաւոր Արևելքի Վլադիվօստօկ քաղաքի պարբերական մամուլի մասին կարդում ենք հետևեալ Թւերը։ Այդ փոքրիկ քաղաքը, որ ունի ընդամենը 10—12 հազար ռուս ազգաբնակութիւն (ի հարկէ զօրքերը չը հաշուած) ունի 10 հատ պարբերական հրատարակութիւններ և արդէն խնդիր է տրված 11-րդը հրատարակելու համար։ Կան երկու ամենօրեայ թերթեր, մի հատ շաբաթը 3 անգամ հրատարակվող, 1 հատ էլ շաբաթաթերթ։ Մնացած 6-ն էլ այլ և այլ պարբերական հրատարակութիւններ են։

—

Սիբիրի Տօմսկ քաղաքի ինտելիգենցիայի մէջ միտք է յղացել խնդրել լուսաւորութեան մինիստրին, Թոյլատրել կանանց լսել համալսարանում դասախօսութիւններ կամ եթէ դա անհնար լինի, կազմակերպել Տօմսկում կանանց բարձրագոյն կուրսեր, ուր կարողանային կրթութիւն ստանալ Սիբիրի երիտասարդ կանայքը։ Սրանից 3 տարի առաջ Տօմսկից մօտ 300 կանանց ստորագրութիւնով մի խնդրագիր է գնացել Տօմսկի համալսարանի վերատեսչի անունով, որ իրանց Թոյլատրվի դասախօսութիւններին յաճախել, բայց այդ խնդրի վիճակը մինչև օրս անորոշ է։

—

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Կիրակի, յունվարի 18-ին, Նախկին քաղաքային ձմեռային ժողովարանի դահլիճում, դերասան Յովհաննիսեանը, տեղիս սիրողների մասնակցութեամբ, տուեց իր երկրորդ ներկայացումը։ Խաղացվեց «Կախարդված պրինց» 3 գործողութեամբ, Թարգմանութիւն Տէր-Դաւթեանի և «Ա՜յ ձեզ օյին» վօդեվիլները։ Չը նայած տեղերի գների Թանգութեանը, դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր։ «Կախարդված պրինցի» մէջ պ. Յովհաննիսեանը, կօշկակար Հանսի դերում, անշուշտ լաւ կը լինէր, եթէ ծայրահեղութեան մէջ չընկնէր. միւսները բաւարար էին։ «Ա՜յ քեզ օյինի» մէջ պ. Յովհաննիսեանը Աւետիք վաճառականի դերում շատ լաւ էր. լաւ էր նոյնպէս օր. Տէր-Գրիգորեանը։ Խաղի ընդհանուր տպաւորութիւնը վատ չէր։ Խաղամիջոցներում նուագում էին զինւորական երաժշտախումբը և «սազանդարները». Ներկայացման վերջը նշանակված էին պարեր, որոնք կարգապահութեան բացակայութեան պատճառով շատ անկանոն անցան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՀԵՏԱՑԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԴԷՄՔԵՐ

III

Գարագաշեան՝ հաստատվելով Պօլսում, սընվեց ազատամիտ ընթերցումներով՝ և 1856 թ. հեռացաւ կղերական նեղ մթնոլորտից և ուզեց մտնել հայ լուսաւորչական հասարակութեան ծոցը, բայց այն ժամանակի պատրիարքը՝ Յակոբոս [illegible]րան չընդունեց։ Գարագաշեան ստիպվէ[illegible]այ բողոքական համայնքի անդամ դառնալ, Հռոմի հալածանքներից պաշտպանութիւն գտնելու համար։ Գարագաշեան, իբրև բողոքական, մասնակցեց բողոքականների օրգանին՝ «Աւետաբեր» շաբաթաթերթի խմբագրութեան։ Բացի այդ, Նախկին հոգևորականը, բողոքական համայնքի ձեռքը տրված աշխարհաբար ս. Գիրքը՝ լեզուի տեսակէտից պակասաւոր գտնելով, ինքն անձամբ վերստին Թարգմանեց, բայց աւետարանը միայն։

Գարագաշեանի դերը մեծ է եղել նոյնպէս գրաբար Աստուածաշունչի պատրաստութեան մէջ, երբ վերջին անգամ փորձ կատարվեց եբրայերէն և յունարէն բնագիրների հետ բաղդատելով լոյս ընծայելու։

Այնուհետև Գարագաշեան նուիրվեց ուսուցչութեան և դասախօսեց բացի Կենտրոնականից, Խաս գիւղի Ներսէսեան ուսումնարանում, ուր Նրան աշակերտեցին Թիւրքահայ յայտնի գրողներից Զերազ, Տէմիրճիպաշեան, Պէրպէրեան և այլն, և Կալաթա Սարայի կայսերական լիսէում։

Գարագաշեանի անունը ժողովրդական դարձաւ իր «Գործնական Քերականութեամբ», որը գոյութիւն ունեցող բոլոր քերականութիւններից իբրև լաւագոյն ձեռնարկ մեծ ընդունելութիւն գտաւ և թէ Պօլսում և թէ գաւառներում լայն չափերով տարածվեց։ Թէպէտև այդ քերականութեան հեղինակումի Թուականից անցել է արդէն 40 երկար տարիներ, բայց նա մինչև այսօր գործ է ածվում Թիւրքիայի ազգային դպրոցներում, և իր դիւրուսոյց մէթօդով՝ մեծապէս ծառայել է հայ լեզուի ուսուցման։

Գարագաշեան հեղինակ է ուրիշ բազմաթիւ դասագրքերի, ինչպէս «Դպրութիւն», «Հատընտիր Քաղուածք», «Ծաղկաքաղ», «Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան», «Համառօտ փիլիսոփայութիւն», «Աշխարհագրութիւն», «Սրբազան Պատմութիւն» և շատ ուրիշ ձեռնարկներ։

Գարագաշեան՝ ինչպէս Մխիթարեան միաբանութեան անդամներից շատերը՝ ծանօթ էր մի քանի լեզուների. բացի դասական լեզուներից, յունարէնից և լատիներէնից, գիտէր գերմաներէն, անգլիերէն, ֆրանսերէն։ Այս վերջին լեզուի մէջ նրա հմտութիւնը Թոյլ էր, այնպէս որ երբ Լաֆօնտէնի «Առակների» Թարգմանութիւնը մէջտեղ հանեց, բաւական խիստ քննադատութեան առարկայ եղաւ գիրքը. Թարգմանական լեզուն՝ անկասկած ոսկեդարեան էր, բայց Թարգմանութիւնը յաճախ անճիշդ։ Եւ այս պատճառով էլ Գարագաշեան կծու բանակուի բռնվեց նոյն երկասիրութեան գլխաւոր քննադատներից մէկին՝ Միհրան Յովհաննիսեանի՝ Թիւրքահայ ժողովրդական բանաստեղծութեան ծանօթ հեղինակի հետ։ Մենք՝ Կենտրոնականում, տակաւին «Առակների» գիրքը հրապարակ չելած (նա տպագրվեց 1894 Թւին) մի քանի անգամ դասի ժամանակ առիթ ունեցանք մատնանիշ անելու Թարգմանական անճշդութիւնները, որոնց մեծ նշանակութիւն չէր տալիս Գարագաշեան, բաւական է, որ Թարգմանութեան լեզուն լինէր զուտ ոսկեդարու լեզու։

Գարագաշեանի գրական կարևոր գործերից մինը նկատված է նոյնպէս Էմէ Մարտէնի «L'Education des mères»-ը—Մայրերի Դաստիարակութիւն։

Բայց Գարագաշեանի անունը նուիրագործված է «Քննական Պատմութիւն Հայոց» հանրածանօթ երկասիրութեամբ, որի ա. մասը՝ նախնական ժամանակ՝ տպագրվեց Պօլսում 1880 Թւին, իսկ մնացեալ բ. գ. դ. մասերը հեղինակը չը կարողացաւ լոյս ընծայել Թիւրքաց մայրաքաղաքում, շնորհիւ գրաքննիչական տիրող պայմանների։ Տասնհինգ տարի յետոյ միայն՝ «Քննական Պատմութիւն Հայոց»-ը հրատարակվեց Թիֆլիսում, ամբողջապէս, «Հրատարակչական ընկերութեան» միջոցով։ Անցողակի ասենք, որ Գարագաշեան պժգոհ էր իր գործի մէջ սպրդած սխալներից, որոնց մասին յաճախ է գանգատվել մեզ՝ իր աշակերտներին։

Գարագաշեան իր պատմութիւնը բաժանում էր երկու գլխաւոր ժամանակների. Ա. նախնական՝ որ սկսում է հայ ազգի ծագումից և հասնում է մինչև Մեծն Տիգրան, այսինքն մինչև 90 թ. Քրիստոսից առաջ և Բ. պատմական ժամանակ, որ շարունակվում է Տիգրան Մեծից, 90 Թուից մինչև մեր օրերը։

Գարագաշեան՝ իր պատմութիւնը մինչև մեր օրերը չէ հասցնում, այլ կանգ է առնում Ե-րդ դարի գրական շարժման և կրօնական պատերազմների վերջը։ Այնպէս որ «Քննական պատմութիւնը» բաժանվում է հետևեալ կերպով.

Ա. մաս, նախնական ժամանակ, ուր հեղինակը խօսում է հայ ազգի ծագման և Հայաստանի ընդհանուր աշխարհագրութեան մասին՝ մէջ բերելով ազգային և մանաւանդ օտար պատմիչների կարծիքները, և օգտվելով եւրոպացի հնագէտների ուսումնասիրութիւններից։

Բ. մասը՝ որից սկսում է հայ պատմութեան վաւերականութիւնը, պարունակում է Արշակունիների հարստութեան պատմութիւնը հեթանոսութեան ժամանակ։

Գ. մասը պարունակում է Արշակունիների պատմութիւնը քրիստոնէութեան ժամանակ եւ Արշակունիների հարստութեան վերացումը։

Դ. մասը նուիրված է Արշակունիների հարստութեան բարձումից յետոյ, «անտէրնչութեան ժամանակին, մինչեւ ի վախճան Ե. դարու, մատենագրական եւ կրօնական շարժմունքին»։

Գարագաշեանի երկասիրութիւնը՝ մեր պատմութեան գիտական, քննադատական ուսումնասիրութեան առաջին լուրջ փորձն է, և իբրև առաջին փորձ՝ բնականաբար ունի իր խարխափումներն ու Թերութիւնները։ Գարագաշեանի գլխաւոր արժանիքը կայանում է այն բանում, որ նա ջանացել է մեր պատմութիւնը զտել անհարազատ տարրերից և ընդունել ճշմարիտ և ստոյգ միայն այն, որ հաստատված, վաւերացված է օտար պատմագիրների վկայութեամբ, բևեռագիր արձանագրութիւնների ընթերցումով, մէկ խօսքով դրական փակտերով և փաստերով։ Իբրև քննադատական ոգիով առաջնորդվող պատմագիր, Գարագաշեան՝ բնականաբար չէր կարող հալած իւղի տեղ ընդունել Խորենացու դիւցազներգական, աւանդավիպային պատմութիւնը։ Բայց, Խորենացու աղբիւրին՝ Մար Աբասի վաւերականութիւնը կասկածի տակ դնելուց յետոյ, Գարագաշեանի ձեռքը մեծ բան չէր մնում մեր պատմութեան ծագումը լուսաբանելու համար. այս պատճառով էլ «Քննական պատմութեան» հեղինակը՝ պատմական յիշատակարաններից զուրկ, հայ ազգի ծագման հանելուկին առջև մնում է վարանքի, խարխափումի ու մութի մէջ, ինչպէս մութի մէջ մնալու դատապարտված են այն բոլոր փորձերը, որոնք կը ձգտեն այդ հանելուկը լուծելու, մինչև որ նոր փաստեր ու նոր յիշատակարաններ երևան չը գան։ Ուրեմն, ինչպէս ասացինք, Գարագաշեանի գործը պէտք է նկատել իբրև մի լուրջ քայլ դէպի մեր պատմութեան գիտական ուսումնասիրութիւնը։ Բայց ընդունել նրան իբրև մի ամբողջացած, կատարեալ գործ—միամտութիւն կը լինէր։ Ապագայ հայ պատմագրին համար, զինված նոր լոյսերով և յիշատակարաններով, ապահովաբար Գարագաշեանի աշխատութիւնը Թանկագին պիտի լինէր, որովհետև «Քննական պատմութիւնը»՝ մեր պատմութեան նախնական նիւթերի մի ճոխ հաւաքածու է։ Արդարև Գարագաշեան իր գործը խճողած է անհամար վկայութիւններով, (citation) որոնք իր աշխատութեան տալիս են մի պատմական շտեմարանի նկարագիրը, քան մի իսկական պատմութեան։

Մեր պատմութեան վերակազմութեան ջանքից շատ, մեծապէս գնահատելի պիտի մնան Գարագաշեանի պատմական մի քանի դէմքերի, ինչպէս Վասակի, լուսաբանութեան փորձերը։ Յայտնի է թէ մեր պատմագիրները անաչառ, եթէ կարելի է այսպէս ասել, առարկայական (objectif) դատողներ չեն եղել. նրանք չափազանց տենդենցիօզ են. իբրև քրիստոնեայ՝ նրանք Վասակին ներկայացնում են մի հրէշ, որ իր սարսափելի մահով՝ այս աշխարհում իսկ պատժվեց։ Գարագաշեան՝ Վասակին ներկայացնում է մի բոլորովին տարբեր գոյնի տակ, մի բոլորովին տարբեր լոյսի մէջ։ Մինչդեռ Վարդանը՝ յափշտակված գործողի տիպարն է, Վասակը՝ խորհողի տիպարն է։ Առաջինը՝ մի Դօն-Քիշօտ է, բայց ոչ ծիծաղելի Դօն-Քիշօտը, այլ խորապէս համակրելի, խորապէս իդէալիստ ու գթոտ Դօն-Քիշօտը, որ պահված է ծիծաղի դիմակին տակ։ Երկրորդը՝ մի խորհող գործիչ է, որ հնազանդում է աւելի դատողութեան, մտածումի, քան երևակայութեան և զգացումի։

Գարագաշեան՝ իր հեղինակած անթիւ դասագրքերից, ինքնուրոյն և Թարգմանական գործերից աւելի, իր «Քննական պատմութեամբ» պիտի ապրի։

Տիգրան

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

Կօնգրէս հրաւիրելու առաջարկը։ Լօնդօնի «Morning Post» լրագրին Վաշինգտօնից հաղորդում են հետևեալը. «Պաշտօնական բարձր շրջաններում այժմ քննվում է այն հարցը, թէ արդեօք չէ՞ հասել նպաստաւոր րօպէ, որպէս զի Միացեալ-Նահանգները, Անգլիան և Եապօնիան, Գերմանիայի և Ֆրանսիայի հետ միասին, եթէ կաջողվի այդ պետութիւնների աջակցութիւնը ձեռք բերել, առաջարկէին Ռուսաստանին կօնգրէս գումարել, ուր ճշտապէս կորոշվէին Ռուսաստանի և բոլոր ուրիշ ազգերի իրաւունքները Մանջուրիայում, նոյնպէս և որոշումներ կը կայանային միջազգային առևտրի իրաւունքների և զօրքի Թւի վերաբերմամբ, որ Ռուսաստանը իրաւունք կունենայ պահել հիւսիսային նահանգներում։ Կօնգրէսի վճիռները պէտք է արտայայտված լինեն համաձայնութեան կամ դաշնագրի ձևով բոլոր պետութիւնների ստորագրութեամբ»։

—

Եապօնական զօրքերի ափ իջնելը Չէմուլպօ։ «New Iork Herald» լրագրի Պետերբուրգի Թղթակիցը, կարդալով հեռագիր եապօնական զօրքերի Չէմուլպօ ափ իջնելու մասին, դիմեց և բացատրութիւններ խնդրեց ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնից։ Նրան պատասխանեցին, որ եապօնացիները շատ եռանդուն գործունէութիւն են ցոյց տալիս։ Եապօնական դեսպանը—շարունակում է Թղթակիցը—Թշնամաբար վերաբերվեց այդ տեղեկութեան։ Նա յայտնեց, որ ափ իջած զինւորների Թիւը, ինչպէս մատնացոյց էր արված լրագիրներում, ճիշտ չէ, որովհետև եապօնացիները այնտեղ այդքան զօրք չունեն։ Ցամենայն դէպս, աւելացրեց նա, Ռուսաստանի և Եապօնիայի միջև գոյութիւն ունի համաձայնութիւն, որի հիման վրա վերջինս, եթէ Կօրէայում անկարգութիւններ ծագեն, իրաւունք ունի ափ իջեցնել զօրքեր այնտեղ։ Նոյն դեսպանը աւելացրեց, որ Ռուսաստանի պատասխանը դեռ չէր կարող տեղի ունենալ, որովհետև դեռ այդ պատասխանը կազմում են. Կօրէայում սկսված անկարգութեան վրա Պետերբուրգում ևս նայում են որպէս մի շատ անախորժ բարդութեան վրա և կարծում են, որ եապօնացիներն են ստեղծում այդ անկարգութիւնները։

—

Ռուսաստանը պատրաստվում է։ Պօրտ-Արտուրից «New Iork Herald» լրագրին հեռագրում են, որ ռուսաց կառավարութիւն գնեց 50,000 տոպրակ ալիւր և ամենաեռանդուն կերպով կենտրօնացնում է ածուխ և ամեն տեսակ մթերքներ։ Փոխարքային մօտ անձերից մէկը ասաց, որ Ռուսաստանը դիտաւորութիւն ունի ամրացնել իր դիրքը Եալու գետի վրա։ Զինւորականների շրջանը չափազանց գրգռված է։ Պօրտ-Արտուրում ցուցակագրված են ձիեր նրանց պիտանիութիւնը որոշելու նպատակով պատերազմական պէտքերի համար։

—

Եապօնիայի բարի կամքից է կախված։ «Berliner Tageblatt» լրագրի Թղթակիցը հեռագրում է Պետերբուրգից, որ ընդհանուր ելքը, հեղինակաւոր աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, կախված է բացառապէս Եապօնիայի բարի կամքից։ Անյաղթելի արգելքներ չը կան։ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ առանձնապէս դժգոհ են անգլիական մամուլից, որ իր ագիտացիայով չափազանց վատացնում է ընդհանուր դրութիւնը։

—

Ռուսաստանը պատասխան տուե՞ց եապօնական վերջին յայտագրին։ Արտասահմանեան մամուլի մէջ շատ հետաքրքրվում են այն հարցով, թէ արդեօք Ռուսաստանը յանձնե՞ց իր պատասխանը եապօնական վերջին յայտագրին։ Իբր թէ այդ պատասխանից է կախված խաղաղութիւնը կամ պատերազմը Հեռու Արևելքում։ Բերլինի «Post» լրագիրը մի ամբողջ յօդուած է նուիրում եապօնական յայտագրի քննադատութեան և նրա հնարաւոր պատասխանին։ «Եապօնական ցանկութիւնները—ասում է լրագիրը—յամենայն դէպս ուլտիմատումի բնաւորութիւն չունեն, այլ այդ ցանկութիւնները հաղորդվեցին Պետերբուրգ մի նկատողութեամբ, թէ Եապօնիան այլ ևս զիջել չէ կարող։ Տօկիօում այն հայեացքն է տիրում, որ պատերազմը տեղի չի ունենայ միայն այն դէպքում, եթէ Ռուսաստանը կընդունէ Եապօնիայի առաջարկութիւնները առանց փոփոխութեան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Տուրին քաղաքի համալսարանի ուսանողները հրաւիրել են ֆրանսիացի ուսանողներին գալ Իտալիա և միասին տօնել երկու լատին ազգերի մերձեցումը։ Ֆրանսիական ուսանողական բազմաթիւ ընկերակցութիւններ պատասխանել են այդ հրաւէրին։ Ուսանողական այդ ցոյցը, երևի, տեղի կունենայ Լուբէի ճանապարհորդութեան ժամանակ։

—Պրօֆէսօր Բերինգ նորերս մի զեկուցում կարդաց Բերլինի տերապեվտիկան ընկերութեան մէջ տուբերկուլօզի մասին։ Պրօֆէսօրը առաջվայ նման համարում է կաթը գլխաւոր աղբիւր վարակման. Նա անհաւանական է համարում վարակումն տուբերկուլօզեան բացիլների ներշնչման միջոցով, ինչպէս և վարակումը գրքերի և Թղթերի հպումից։ Բերինգի կարծիքով, այսպէս կոչված «նախատրամադրութիւն դէպի տուբերկուլօզը» գոյութիւն չունի։ Կռիւը այդ ախտի դէմ պէտք է սկսվի երեխայի ծնվելու րօպէից։ Կաթը ամենից լաւն է ախտահանել ֆօրմալինի մի փոքր քանակութեամբ. ֆօրմալինը սպանում է բացիլները, չը փոխելով եապէս կաթի բաղադրութիւնը։ Այդ միջոցի օգտակարութիւնը արդէն փորձված է կենդանիների վրա։ Բերինգին առարկեցին Ֆրենկէլ և Բաշինսկի պրօֆէսօրները։ Առաջինը պնդում էր, որ վարակումը կատարվում է ներշնչման միջոցով. երկրորդը կասկած յայտնեց Բերինգի Թէօրիայի հիմնաւորութեան մասին իր երկարամեայ պրակտիկայի հիման վրա իբրև մանկական բժիշկ։

—Թէհրանից, յունվարի 11-ին, հեռագրում են, որ այնտեղ տարածվել են մեծ քանակութեամբ վիմագրած Թերթեր պարսկերէն լեզուով, որոնց մէջ խիստ քննադատութեան է ենթարկվում Անգլիայի քաղաքականութիւնը, որ «ձգտում է տնտեսապէս սարկացնել Պարսկաստանը, ինչպէս արդէն իր ազդեցութեան է ենթարկել Հնդկաստանը։

—Ռուսաց և աւստրիական քաղաքացիական գործակալների գալուստը Սալօնիկ սաստիկ տպաւորութիւն գործեց տեղացիների վրա։ Լրագիրներին հաղորդում են, որ մուսուլման հոգևորականութեան ագիտացիան չէ դադարում, չը նայելով ձեռք առնված միջոցներին և աւելի արծարծվում է նոր գործակալների և ժանդարմերիայի զօրապետ Ջիօրջիսի գալով։

—Բուլգարական էկզարխը նորերս յիշատակագիր ներկայացրեց աւստրիական և ռուսաց դեսպանութիւններին, որով նրանց ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ Մակեդոնիայի մի քանի տեղերում սաստիկ պրօպագանդա է կատարվում յոյների ձեռքով, որոնց նպաստում են Թիւրքաց պաշտօնեաները ու սոսկալի բռնութիւններ են գործ դրվում բուլգարների վրա: Թիւրքերը այժմ ամեն կերպ աշխատում են կռուացնել յոյներին և բուլգարներին. բաժանիր, որ տիրես,—ահա նրանց տակտիկան:

—Վերջերս Եւրօպայում լուրեր տարածվեցին Պարսից Շահի յանկարծակի հիւանդութեան մասին, որը, իբր թէ, սրտի հիւանդութիւն ունի: Սակայն, ինչպէս հաստատում է «Standard» լրագիրը, Թէհրանից իրան հաղորդած տեղեկութիւնների համաձայն, Շահի հիւանդութիւնը բացատրվում է ուրիշ պատճառով, այն է թունաւորութեամբ: Թեթև տկար լինելով, Շահը իր պալատական բժիշկի դեղատոմսով դեղ ընդունեց և դրանից յետոյ իսկոյն և եթ վատ զգաց իրան: Շահի համար պատրաստված դեղի մէջ գտնվեց ատրօպին: Իր ժամանակին ձեռք առնված միջոցները անզօր դարձրին թոյնի ներգործութիւնը, և Շահը հետևեալ օրը արդէն կատարելապէս առողջ էր: Քննութիւն է կատարվում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կանտի մահվան հարիւրամեակը.—Քէօնիգսբերգ գերմանական փոքրիկ քաղաքը պատրաստվում է տօնելու իր աշխարհահռչակ զաւակի Էմմանուէլ Կանտի, մետաֆիզիքական փիլիսօփայութեան այդ «անթագ թագաւորի» մահվան հարիւրամեակը, որ լրանում է այս յունվարի 30-ին

Հանդէսի գլխաւոր բաժինը տեղի կունենայ համալսարանում, ուր կը կատարվի տարեկան ակտն առանձին ծրագրով: Հանդէսին ներկայ է լինելու Պրուսիայի լուսաւորութեան մինիստրը: Ուղարկված են բազմաթիւ հրաւէրներ զանազան համալսարանների և գիտական ընկերութիւնների: Հանդէսի մի փոքր մասն էլ կը կատարվի Կանտի թաղման տեղը՝ որ կոչվում է Stoa Kantiana.

Կանտը ծնվել է Կէօնիգսբերգում 1724 թւի ապրիլի 22-ին և մեռել է 1804 թւի փետրվարի 12-ին նոր տոմարով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 յունվարի

ԲԵԼԱՍՏՕԿ: Հրէական հասարակութեան ներկայացուցիչները վճռեցին արկղիկների հարկից գոյացած գումարներից 40,000 ռուբլի յատկացնել առևտրական դպրոցի շէնք կառուցանելու համար, նոյնքան էլ հրէական արհեստաւորաց դպրոց կառուցանելու համար:

ԱՍՏՐԱԽԱՆ: Բացվեց ալկօհօլիկների համար ամբուլատօրիական բուժարան:

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ. («Րէյտերի» գործակ.) Լէեասանի և Եալու գետի մէջ եղած երկաթուղու գծից արվում են ծայրայեղ պահանջներ նորակոչ զինուորների և մի քանի գնդերի պահեստի զօրաբաժինների փոխադրութեան առիթով, որոնք ուղարկվում են Եալու: Պաշտօնական շրջաններում դեռ ևս վախենում են պատերազմ ծագելուց:

ՉԻՖՈՒ. («Րէյտ. գործ.») Անցեալ շաբաթ զէնքի կոչվեցան եապօնական նաւատորմի պահեստի զօրքերը և մեծ գաղտնապահութեամբ զէնքի է կանչված նոյնպէս բանակի պահեստի զօրքի առաջին մասը: Մարդիկ գնում են իրանց նշանակման տեղերը ծպտված զգեստներով: Այդ մասի պահեստի զօրքի մնացած բաժինը հրաման է ստացել զէնքի կոչվելու պատրաստ լինել: 40 փոխադրող նաւեր Կումամոտոյի մի զօրաբանակով կազմ ու պատրաստ սպասում են Տակեշիկի ծոցը նաւելու՝ Կորէա արշաւելու նպատակով:

ՍՕՖԻԱ. (Դիմադիր շրջաններից): Զեռնհաս շրջաններն սկսում են լուրջ կերպով անհանգստանալ Թիւրքիայի և Բուլգարիայի փոխադարձ մեղադրանքների պատճառով, որոնք ընդունակ են աւելի լուրջ միջնադէպեր ծագեցնել, քան Պարօմինօվօ գիւղում եղած դէպքը: Կառավարութիւնը Թիւրքիայի դրութիւնը ներկայացնում է սպառնական ձևով և պարտք է համարում համապատասխան պատրաստութիւններ տեսնել:

ԼԻՍՍԱԲՕՆ: («Րէյտերի գործ.»): Պօրտուգալական պարլամենտում հարցապնդում եղաւ, թէ արդեօք ճիշդ է, որ պօրտուգալական մարտանաւերը ծախվում են ռուսական պետութեան գործակալներին: Մինիստր-նախագահը յայտարարեց ժողովում, որ գնման մասին ոչ մի առաջարկութիւն չէ եղել:

ՏՕԿԻՕ («Րէյտ. գործ.): Լօնդօնում տարածած այն լուրը, թէ Պետերբուրգի եապօնական դեսպան Կարինօ Տօկիօ է ուղարկել Ռուսաստանին թշնամական պատասխան, զուրկ է որ և է հիմքից:

20 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը, ուղևորվելով բարձրագոյնս թոյլատրված վերահսկողութիւն անելու սիբիրեան և անդրբայկալեան երկաթուղիների, ընթացիկ գործերի վարչութիւնը յանձնեց իր օգնական Մեասօեդօվ-Իվանօվին:

Կ. ՊՈԼԻՍ: Գեներալ Ջիօրջիսը ժամանեց այստեղ երկու իտալական սպաների ուղեկցութեամբ:

ԲԵՐԼԻՆ: Գերմական գլխաւոր հիւպատոսը հեռագրել է, որ Օրանժի գետի ափերին հօթենթօթներն անձնատուր եղան:

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՍ: Պաշտօնապէս հաղորդում են, որ վարչական զօրքերը Սան-Ռամօնի մօտ յաղթվեցին:

ՀԱՄԲՈՒՐԳ: «Էմիլիա-Վերման» նաւը թընդանօթներով, ռազմամթերքներով և 6 ենթասպաներով հասաւ Սվանկօպմունդ:

ՀՌՕՄ: Անգլօ-իտալական դաշնադրութիւնը միջնորդ դատարանի մասին ստորագրվել է:

ԲԷԼԳՐԱԴ: Բ. Դրան այն հաղորդագրութիւնը, որը պնդում էր, թէ Վրանիայում և Սերբիայի ուրիշ տեղերում դինամիտ և ռումբեր են պատրաստվում, անհիմն է: Այդ հաղորդագրութիւնը պէտք է ծառայէր եւրօպական հասարակական կարծիքը մոլորեցնելու թրքական զօրքերը Սերբիայի սահմանների վրա կենտրօնացնելու առթիւ և դրանով արդարացնելու Կոսսօվօյի վիլայէթում թրքական զօրքերի արած գազանութիւնները: Սերբիական կառավարութիւնը հաւատարիմ է մնում ոչինչ չը ձեռնարկելու սկզբունքին, այն ամենի առթիւ ինչ որ կարող էր անուանարկել սկսած րէֆօրմները:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ խմբագրած
«ԼՈՅՍ»
Պատի եւ գրպանի օրացոյցները
ՍՊԱՌՎԱԾ ԵՆ

Վաճառվում են. 1) Պատի օրացոյց, երկրորդ կրճատած հրատարակութեամբ (112 երես)—25 կ.: 2) «ԼՈՅՍ» օրացոյց հանդէս. 504 էջ, մօտ 30 գունաւոր պատկերներով:

Գինը ոսկեզօծ կազմով 1 ռուբլի 25 կոպ. պօստային ճանապարհածախս 35 կոպ.: Դիմել Тифлисъ. Троицкая 11, Е. Топчяну. 3—5

Լոյս տեսաւ Ա—ԴՕ
„ՐԵԲԵԿԱ"
Զրոյց Բ. Խօտեմսկու, գինը 3 կոպ.
Պահեստը գտնվում է Երեւանում «Արարատ» գրավաճառանոցում: 2—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ գրավաճառանոցում վաճառւում են հետևեալ նոր հրատարակութիւնները՝

Բաքալեան բժշկ., «Տնային բժշկարան», պրակ բ. 448 մեծադիր էջ, Թիֆլ. 1904 թ., գ. 1 ռ. 60 կ., ուր ծախվում է նոյն բժշկարանի պրակ ա. 182 մեծադիր էջ, պատկերազարդ, Թիֆլ. 1903 թ., գ. 1 ռ.:

Պալասանեան Ստ., Պատմութիւն հայոց, սկզբից մինչև մեր օրերը, գ. տիպ, Թիֆլ. 1903 թ. գ. 1 ռ. 50 կ.:

Ս. Էջմիածին, 305—1903, պատկերազարդ նկարագրութիւն, Վենետիկ, 1903 թ. գ. 1 ռ.:

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (շ. 1 ա.) 2—10

Նոր լոյս են տեսել
Ք. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
մշակած հայկական երգերը, որ ներդաշնակել է պիանօի համար
Լէօնիդ Կնիգա

Ծախվում են ամեն երաժշտական խանութներում, «Գուտտէնբէրգի» գրավաճառանոցում, Թիֆլիսում (այնտեղ է և պահեստը) և հրատարակչի՝ Պօղ. Կարա-Մուրզայի մօտ (Тифлисъ. ул. Панасевича № 8).

Առաջի տետրի (10 երգ) գինն է 1 ռուբլի:
(չ. շ.) 2—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը 9—11 ժ. առաւօտը
և 5—7 ժ. երեկոյեան:
Վելիամինովսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. (չ. ու. կ.) 9—10

ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, յունվարի 22-ին, հայոց դրամատիքական ընկերութեան խումբը
Տ. Մայսուրեանցի բենեֆիսին
կը ներկայացնէ առաջին անգամ դը Բերտօի և Սիմօնի կօմէդիան
ՋԱՋԱ
5 արար., թարգ. Վ. Տիրացեանի

Մասնակցում են. տ.տ. Ազնիւ, Աւետեան, Խիթարեան, Մայսուրեան, Մելիքեան, Նոնիկեան, Զմշկեան, Վարդուհի, պ.պ. Աբէլեան, Ազեան, Ալիխանեան, Աղայեան, Աւետեան, Մամիկոնեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Ռշտունի, Տէր-Դաւթեան և ուրիշները:

Սկիզբն է ճիշդ ժամը 8-ին, երեկոյեան:
Տեղերի գները բենեֆիսային են:
Պատրաստվում է ներկայացման համար «Կտակ», «Հարստահարուած առաքինութիւն» և ուր.
1—2 Րեժիսոր Մ. Ջաբար

ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ԲԱՆ!!!

2 ժամացոյց և երեք արժէքաւոր իրեր 15 ռուբլու փոխանակ միայն 5 ռ. 25 կոպէկ: 1) Գրպանի ժամացոյց, ճաշակաւոր կերպով ոսկեզօծած, արտաքին մասերը ոչնչով չեն զանազանվում իսկական ոսկուց: 2) Շղթան ամերիկական ոսկուց: 3) Բրելօկը—կողմնացոյց՝ ամերիկական ոսկուց: 4) Կաշւէ ծխատուփ կամ դրամաքսակ հետը մի կնիք՝ անունը, հայրանունը և ազգանունը վրան: 5) Ձրի ստանում է ամեն մարդ իբրև պրեմիա հիանալի պատի ժամացոյց, որ անհրաժեշտ է ամեն մարդու համար ննջարանում, մանկանոցում, գրասենեակում, խոհանոցում: Պատի ժամացոյցն Աբելեան Սիբիր ուղարկելու համար վճարվում է պօստի ծախքի լրացուցիչ մասը: Դիմել. Т-во Шарль, Варшава, центральная почта, ящикъ № 324. Улица Монюшки № 12/11:

Ուղարկում ենք վերադիր վճարով և առանց գրաւականի հինգտարեայ երաշխաւորութիւնով: (եր. օր.) 1—8

Ծախվում են

Երևանի դեղձից և ծիրանից տանու պատրաստած առաջին տեսակի կոնսերներ: Դիմել Դվօրցօվայա փողոց, Վիկտօրիա հիւրանոց № 6, և Գօլօվինսկի պրօսպէկտ, տուն իշխ. Օրբելեանի № 15, խանութ «Բիժուտերի-Իմիտասիօն»: (չ. հ. կ.) 1—3

Լոյս տեսաւ Յովհաննէս Թումանեանի
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Գինն է 3 ռուբլի
Դիմել՝ Թիֆլիս, իշխանուհի Մ. Թումանեանին. Барятинская 8, կամ հեղինակին—Бебутовская. 2—3

Մամուլի տակն է եւ շուտով լոյս է տեսնելու
«ՄՈՒՏ ԺԳՆԱՒՈՐ»
և
«ԱՆՍԷՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ»
Հեղինակութիւն Ա. Արարատեանի

Բաժանորդներին խնդրում ենք դիմել և հեղինակի այրիին Ֆօմինսկայա փողոց, № 15, Արարատեանցին: 1—3

Մի փորձված հայոց լեզուի ընտանիքաւոր ուսուցիչ անգործ է, որոնում է ընտանեկան դասեր: Համաձայն է գնալ և ուրիշ քաղաքներ: Հասցէն «Մշակի» խմբագրութեան: 2—2

Բացված է պատկերազարդ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ
XI եւ XII-րդ գրքերի բաժանորդագրութիւնը:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲ.

Նախկին տասը գրքերը ի միասին արժեն՝ խմբագրութեան մէջ՝ 15 ռուբլի, մի գիրքը 2 ռուբլի. երկուս և աւելին՝ իւրաքանչիւրը 1 ռ. 50 կոպ., ա. գիրքը՝ 3 ռուբլի:

Դիմել. Ервандy Лалаянцъ. Тифлисъ, Семинарія Нерсисянъ կամ Саперная 5.
(կ. երեք. հ.) 2—12

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի:
43—100

Հաղորդում եմ պ.պ. մեղուապահներին, որ իմ պահեստում պատրաստվում են վաճառքի համար 100 պուդ արհեստական մոմաթերթ և 1000 հատ Դադանի սիստեմի շրջանակաւոր փեթակներ: Պահեստում ծախվում են նաև թէ ռուսական և թէ արտասահմանեան մեղուապահական բազմազան գործիքներ. Փացէլիայի և ուրիշ բոյսերի թարմ սերմեր, մեղուապահական դասագրքեր: Մասնաւոր պատուէր տուողներից ընդունվում է մեղրամոմ արհեստական թերթեր պատրաստելու համար:

Պրէյս-կուրանտը ուղարկում եմ երկու 7 կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ: Ամեն ինչ վաճառվում է էժան գներով:
2—3

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
գրողների, գիտնականների, պատմական գործիչների, գիտութիւնների, գրականութիւնների և երկիրների—համաշխարհային և կովկասեան ու հայկական՝
(Մօտ 1000 էջ եւ մօտ 350 պատկերներով)

խմբագրութեամբ և հրատարակութեամբ «Հանրամատչելի Գրադարանի» հրատարակիչ Հ. Առաքելեանի, նմանողութեամբ Պավլենկօվի «Энциклопедическій Словарь» և ֆրանսերէն Dictionnaire—Manuel Illustré des Ecrivains ef des Littératures» հրատարակութիւնների:

Հանրագիտական պատկերազարդ բառարանը կարևոր օժանդակ և օգտակար տեղեկատու կը լինի ամեն մի ինտելիգենտ և ինքնակրթութեամբ զբաղվող անձի համար: Բացված է բաժանորդագրութիւն. գինն է մինչեւ բառարանի լոյս տեսնելը—4 ռ., լոյս տեսնելուց յետոյ 5 ռ., կազմով,—որ կը լինի շքեղ և գեղանկար—1 ռուբլի աւելի: Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 50 կ., իսկ կազմածների համար 70 կ.: Կարելի է վճարել մաս-մաս—2 ռ., և յետոյ 2 ռ. 50 կ.: Պէտք է դիմել բացառապէս՝ կազմող—հրատարակիչ Հ. Առաքելեանին այս հասցէով. Թիֆլիս, խմբ. «Մշակ»-ի, Тифлисъ. Редакція «Мшакъ».

Ովհետև Հանրագիտական Բառարանի տպագրութեան ծախքը մեծ է, ուստի քիչ քանակութեամբ է տպվելու, այդ պատճառով, ցանկալի էր, որ ստորագրողները շտապէին մինչև մայիս ամիսը յայտնել. 2—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1904 Թ.
ՄՈՒՐՃ
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան IV տարի)
Խմբագրութեան եւ աշխատակիցների նոյն կազմով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստանում՝ տարեկան 10 ռ., կէս տարին 6 ռ., 1 ամսուան 1 ռ.: Արտասահման՝ տարեկան 12 ռ. (32 ֆ.), կէս տարին 7 ռ. (18 ֆ.), 1 ամսուան 1 ռ. 20 կ. ($4^1/_2$):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 16:
Կայսրութեան այլ տեղերից՝ պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «Мурчъ».
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la revue «MOURTCH».

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ
Եւրոպա—պ. Յակոբ Աղասէր, Zurich (Suisse), Weinbergstr. 103, Hagop Aghasser: Պարսկաստան—Թեհրանի հայոց դպրոցների տեսուչ պ. Լևոն Բուբայեան: Եգիպտոս—Դոկտոր Գ. Փաշայեան. Ալէքսանդրիա.

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.— կամ՝ սկզբում 5 ռ. և յուլիսի 1-ին 5 ռուբլի: Գրավաճառներից մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունվում:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են—1 երես բովանդակ յայտարարութեան համար 15 ռ., $^1/_2$ եր.—8 ռ., $^1/_4$ եր.—4 ռ.: 4—5

Дозволено Цензурою. Тифлисъ, 20-го января 1904 г. «Տպարան ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» Михайл. пр. № 81.